

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵԼԻ ՍՐԲԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեպտեմբերի 4-ին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ (ԿԱՐԱՊԵՏ)

Հովհաննես Մկրտիչը Ավետարանների մեջ մեծագույն դեմքն է՝ Հիսուսից հետո: Նրա պատանեկությունն ու երիտասարդությունն անցել է մենության մեջ: Հովհաննեսը քարոզել է սկսել 30 տարեկանից, Հորդանանի հովտում:

«Ապաշխարեցեք, որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը»:

«Ով որ երկու հանդերձ ունի, մեկը չունեցողին թող տա»:

Ահա այս բնույթի քարոզությունների պատճառով ոմանք Հովհաննեսին համարում էին գալիք Մեսիա:

«Ինձանից հետո կգա հզորագույնը, որի կոշիկների կապն անգամ արձակելու արժանի չեմ: Նա ձեզ պիտի մկրտի Հոգով և կրակով», ապա հայտարարում է Հովհաննեսը:

Հովհաննեսի մեծագույն գործը համարվում է Հիսուսին մկրտելը Հորդանան գետում և Նրան Մեսիա հայտարարելը:

«Սա է, որի մասին ասում էի, թե ինձանից հետո պիտի գա... Ես եկա այն հայտարարելու Իսրայելի ժողովրդին: Ես տեսա Հոգին, որ իջնում էր Նրա վրա երկնքից՝ աղավնու կերպարանքով»:

Հետագայում Հերովդես թագավորը ձերբակալել և բանտարկել է տալիս Հովհաննեսին, իրեն հանդիմանելու համար այն բանում, որ ինքը հափշտակել էր իր եղբոր կնոջը, և գլխատել տալիս:

ՀՈՎԲ ԱՐԴԱՐ

Հովբը Եդոմայեցի էր, որ ապրում էր Մեռյալ ծովի շրջակայքում տարածված լեռնաշխարհում: Նա «կատարյալ աստվածապաշտ մարդ էր՝ հեռու ամեն տեսակ մեղքից ու չարիքից»: Ուներ յոթ տղա և երեք աղջիկ: Մեծահարուստ էր՝ տեր յոթ հազար այծ-ոչխարի, երեք հազար ուղտի, հինգ հարյուր լուծ եզի, հինգ հարյուր մատակ էշի: Շրջապատված էր բազմաթիվ ծառաներով: Սակայն այս հարստությունը չէր այլասերել նրան: Հովբը մեծագործ էր և բարեսեր: «Այնպես որ այս մարդը մեծագույնն էր Արևելքի ազնվականների»:

Հովբը Աստուծո կողմից ենթարկվում է մի շարք փորձությունների. զրկվում է հարստությունից, սպանվում են զավակները, ինքը վարակվում է բորոտությամբ: Բայց այս բոլորից հետո անգամ Հովբը չի մեղանչում Աստուծո դեմ և չի հայտնում որևէ դժգոհություն Աստծուն: Իսկ կնոջ դժգոհանքին Հովբը պատասխան է տալիս. «Եթե Տիրոջ ձեռքից բարիքներ ընդունեցինք, չարիքներին ինչու պիտի չհամբերենք»:

Արդարացած դուրս գալով այս բոլոր փորձություններից, Հովբը առաջվանից ավելի մեծ օրհնությունների է արժանանում Աստուծո կողմից:

Հովբ արդարն ապրել է 248 տարի:

Սեպտեմբերի 27-ին

ԳԵՈՐԳ ԶՈՐԱՎԱՐ

Գեորգ զորավարը ծնունդով կապադովկիացի էր: Մեծացել է քրիստոնյա ընտա-

նիքում: Այնուհետև զինվորագրվել է հռոմեական բանակում և կարճ ժամանակամիջոցում հասել զորավարի աստիճանի: Գեորգը Դիոկղետիանոս կայսեր սիրված անձնավորություններից էր:

Քրիստոնյաների նկատմամբ հալածանքները սկսելուց առաջ կայսրը այդ առթիվ խորհրդակցության է հրավիրում իր մեծամեծներին՝ նրանց հավանությունը ստանալու և հրովարտակ հրապարակելու: Ժողովում բոլորը հավանություն են տալիս կայսեր մտադրությանը՝ բացի Գեորգ զորավարից: Վերջինս խստագույնս քննադատում է կայսեր առաջարկը: Գեորգի քննադատական խոսքից պարզ է դառնում նրա քրիստոնյա լինելը: Կայսրը բանտարկել է տալիս նրան և ենթարկում անլուր չարչարանքների, որոնց Գեորգը տոկում է քաջաբար: Ի վերջո, բազմաթիվ ստիպումներից և հորդորներից հետո, Գեորգը տալիս է իր համաձայնությունը՝ այցելելու կուռքերին: Խոր գոհունակությամբ և ուրախությամբ կայսրը Գեորգին անձամբ առաջնորդում է մեհյան: Սակայն Գեորգը անսպասելի կերպով մեհյանում մի առ մի ջարդոտում է բոլոր կուռքերը՝ դրանք հայտարարելով սուտ և սին: Այս հանդուգն արարքի համար Դիոկղետիանոս կայսրը գլխատել է տալիս նրան:

Գեորգ զորավարի նահատակությունը հավանաբար տեղի է ունեցել 303 թվականին, ըստ ոմանց Նիկոմեդիայում, իսկ ըստ այլոց՝ Պաղեստինի Ռամլե կամ Լյուդ քաղաքավանում:

Ս. Գեորգը համարվում էր Անգլիայի պաշտպան սուրբը:

Սեպտեմբեր ամսում մեր Եկեղեցին տոնում է նաև հետևյալ սրբերի հիշատակը.

Սեպտեմբերի 1-ին—Ստեփաննոս Ուլնեցի և Գոհարին, Ծամիդես, Տուքիկոս ու Ռամիկոս վկաներ:

Սեպտեմբերի 2-ին—Եզեկիել, Եզր և Զաքարիա մարգարեներ: Վերջինս հայրն է Հովհաննես Մկրտչի:

Սեպտեմբերի 6-ին—Նիկիայի Ս. Ժողովի երեք հարյուր տասնութ հայրապետներ:

Սեպտեմբերի 22-ին—Մամաս, Փիլիկտիմոն և Սիմեոն Սյունակեցի սուրբեր:

Սեպտեմբերի 23-ին—Սուրբ կույսեր Փեփրոնիա, Մարիանիա և Շուշան՝ դուստրը Մեծն Վարդանի:

Սեպտեմբերի 25-ին—Սուրբ հայրապետներ Բարաղամ, Անթիմոս և Երանոս:

Սեպտեմբերի 27-ին—Ադոկտոս և Ռոմանոս երգեցող:

Սեպտեմբերի 29-ին—Սուրբ Դավիթ Դրվնեցի և Ղամբեոս ու Ղամբեուհի վկաներ:

Սեպտեմբերի 30-ին—Սուրբեր Եվստաթեոս և իր կին Թեոփիստիա ու երկու որդիներ. սուրբ կույսեր Երմոնիա և Նեքտարինա:

Հոկտեմբերի 2-ին

ՍԱՀԱԿ ԵՎ ՀԱՄԱԶԱՍՊ ԻՇԽԱՆՆԵՐ

Սահակը և Համազասպը Վասպուրականի Գագիկ Արծրունու որդիներն էին: Իրենց եղբայր Մեհրուժանի հետ 775 թվականին Սահակը և Համազասպը մասնակցում են արաբների դեմ կազմակերպված ապստամբական շարժմանը: Արաբական Հարուն Ալ Ռաշիդ թագավորի նախորդ Մուսան, նշված ապստամբությունից տասը տարի անց, Հայաստան է ուղարկում Խազմ անունով ոստիկանին՝ հաշվեհարդար տեսնելու կատարված այդ ռազմական դեպքերի համար: Գալով Հայաստան, Խազմի առաջին գործն է լինում ձերբակալել նշված երեք եղբայրներին՝ որպես կազմակերպիչներ սույն ապստամբության:

Երեք ամիս տևող բանտարկությունից և բազմաթիվ չարչարանքներից հետո, կրկին երեք եղբայրները հանվում են դատական ատյան: Սահակն ու Համազասպը կտրականապես մերժում են ընդունել իսլամություն, իսկ Մեհրուժանը, չդիմանալով խոշտանգումներին, տկարանում է և տեղի տալիս:

Այնուհետև Սահակը և Համազասպը կրկին ենթարկվում են զանազան տանջանքների և 786 թվականի Ծննդյան ութօրեքին գլխատվում: Որպեսզի երկու եղբայրների ոսկորները չարժանանան նահատակության պատվի, հրամայվում է այրել դրանք և փոշին ցրել:

Հոկտեմբերի 11-ին

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ծնվել է 360 թվականին Տարոնի գավառի Հացեկաց գյուղում և որդին է Վարդան անունով մի անձնավորության: Մանուկ հասակից սովորում է հունարեն և պարսկերեն ու Խոսրով Գ թագավորի օրոք պաշտոնավարում արքունական դիվանում: Այնուհետև թողնում է աշխարհիկ կյանքն ու նվիրվում հոգևոր գործունեության: 395 թվականին գնում է Գողթն գավառ՝ քարոզության: Ու հենց այստեղ, այս գործունեության մեջ էլ զգում է հայ տառերի կարևորությունը, որի համար և դիմում է Սահակ կաթողիկոսի օգնությանը: Կաթողիկոսի հավանությամբ

և միջնորդությամբ ու Վռամշապուհ թագավորի արքունական հրովարտակով Վահրիճ իշխանը ուղարկվում է Դանիել Ասորի եպիսկոպոսի մոտ՝ հայկական նշանագրերը բերելու: Բերված հայկական նշանագրերի հիման վրա Մեսրոպը բաց է անում դպրոց: Սակայն գործի ընթացքը ցույց է տալիս, որ նշված նշանագրերը չեն բավարարում հայերեն մտքերի անթերի արտահայտությանը: Այդ պատճառով ժամանակավորապես դադարեցվում են հայերեն դասավանդությունները, և մի քանի աշակերտների հետ Մեսրոպը ճամփորդում է Եդեսիա, Ամիդ: Այնուհետև երկնային զորությամբ հղանում է հայերեն գրերը և, անցնելով Սամոսատ, Հռուփանոս անունով մի հունագետի հետ վերջնականորեն կերպավորում հայկական տառերը: Ապա գալիս է Հայաստան և բաց անում դպրոցներ:

Աստվածաշնչից հայերեն թարգմանած առաջին նախադասությունն էր՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է նաև Վրաց և Աղվանից գրերը և անմիջական գործակցությամբ նպաստել դրանց տարածմանը և դասավանդություններին:

Մաշտոցը վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին Վաղարշապատում և թաղվել Օշական գյուղում: Նրա գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի:

ԵՂԻՇԵ

Ծնվել է 410-ական թվականներին: Եղիշեն Սահակ-Մեսրոպյան դպրոցի գլխավոր աշակերտներից էր: Լինելով Վարդանի ատենադպիրը, շուրջ 458 թվականին գրում է Վարդանանց պատերազմի պատմությունը, որտեղ հիշատակված Արտաշատի ժողովին ներկա գտնվող Ամատունյաց եպիսկոպոսը հենց ինքն է:

Եղիշեին են վերագրվում «Միանձանց խրատ» բարոյախոսական աշխատությունը և խրատական կանոններ, ինչպես նաև «Տէրունական աղօթից», «Յեսուայ» ու «Դատաւորաց» գրքերի մեկնությունները, «Մեկնութիւն արարածոց»-ը և «Այլաներպութեան» մի ճառ:

Վարդանանց պատերազմից հետո Եղիշեն ճգնողական կյանք է վարում նախ Մոկաց, ապա՝ Ռշտունյաց լեռներում, որտեղ և կնքում է իր մահկանացուն, հավանաբար 470—475 թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Հետագայում այս երկու ճգնարանների վրա կառուցվում են եկեղեցիներ:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Քերթողահայր կամ Պատմահայր Մովսես Խորենացին ծնվել է շուրջ 410 թվականին Տարոն գավառի Խորոն գյուղում: 15—16 տարեկան հասակում ուսանում է Վաղարշապատում, որտեղ դասավանդում էր Ս. Մեսրոպը:

Հավանաբար 432—434 թվականներին Ս. Սահակը և Ս. Մեսրոպը մի քանի այլ աշակերտների հետ Մովսեսին ուղարկում են Ալեքսանդրիա՝ բարձրագույն ուսում ստանալու: Այստեղ հայ ուսանողները, այդ աշխարհահռչակ մատենադարանում, հնարավորություն են ունենում կարդալու հույն բանաստեղծների, փիլիսոփաների, պատմագիրների և այլ գիտնականների գրվածքները:

5—6 տարի ուսման մեջ կատարելագործվելուց հետո հայ ուսանողները վերադառնում են հայրենիք և վախճանված գտնում իրենց երկու հոգևոր հայրերին և լուսավորիչներին՝ Ս. Սահակին և Ս. Մեսրոպին: Այս մասին Խորենացին սրտառուչ կերպով գրում է իր «Ողբ»-ում. «Մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ ամենիմաստ գիտությամբ և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով հույս ունենինք հարսանիքում պարել... և առագաստի երգեր երգել,—այժմ այդ ուրախության փոխարեն գերեզմանի վրա ողբեր եմ ասում ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսել նրանց վերջին ձայնն ու օրհնությունը»:

Խորենացին գրել է «Ներբողեան Հռիփսիմեանց», «Պատմութիւն Հռիփսիմեանց», «Ճառ Վարդավառի», «Թուղթ առ Սահակ Բագրատունի» և «Պատմութիւն Հայոց» աշխատությունները:

Մովսես Խորենացին մահացել է շուրջ 485 թվականին:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Ծնվել է 470-ական թվականներին Տարոնի գավառի Ներգին գյուղում, այդ պատճառով էլ նա հաճախ կոչվել է նաև Դավիթ Ներգինացի:

Դավիթը պատանի հասակում ուղարկվել է ուսանելու Ալեքսանդրիա: Նրա ուսուցիչն է եղել Օլիմպիոդորոս Կրտսերը, որը Ե դարի վերջին և Զ դարի առաջին կեսին ղեկավարել է Ալեքսանդրիայի փիլիսոփայական դպրոցը:

Ե՛վ ուսումնառության ու ուսուցչության տարիներին դրսևորած իր ձիրքերով, և՛ փիլիսոփայական վեճերին մասնակցելու իր

հմտությամբ ու խորիմացությամբ Դավիթը ստացել է «Անհաղթ» տիտղոսը: Հայաստանից դուրս նա հայտնի է նաև Դավիթ Հայ (Դավիթ Արմենիոս) անունով:

Դավիթ Անհաղթի գրչին են պատկանում «Փիլիսոփայության սահմանումները», «Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը», «Արիստոտելի Անալիտիկայի մեկնությունը» և «Արիստոտելի «Կատեգորիաների» մեկնությունը» աշխատությունները:

Դավիթ Անհաղթի երկերը պահպանվել են երկու լեզուներով՝ հայերեն և հունարեն: Սկզբում նա իր աշխատությունները գրել է հունարեն, բայց երբ վերադարձել է Հայաստան, գրել է հայերեն:

Դավիթ Անհաղթը մահացել է Զ դարի կեսերին: Նրա աճյունը հանդիսավորությամբ տեղափոխվում է հայրենի Տարոն գավառ և թաղվում Մշո Ս. Առաքելոց վանքում:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Գրիգոր Նարեկացին ծնվել է 951 թվականին Ռշտունյաց գավառի Նարեկ գյուղում: Որդին էր Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի:

Վաղ հասակից ուսանում է իր մայրական ազգական Անանիա վարդապետ Նարեկացու մոտ, որն այդ ժամանակ Նարեկա վանքի վանահայրն էր: Ձեռք բերելով այն ամենը, ինչ կարող էին տալ Ժ դարի հայ ամենաառաջավոր դպրոցները, Գրիգորը հետագայում դառնում է Նարեկա վանքի դպրոցի սյուներից մեկը:

Նա գրել է մեկնություններ, ներբողներ, գանձեր, տաղեր: Նրա քերթվածների գլուխգործոցն է համարվում «Ողբերգութեան Մատեան» պոեմը կամ Նարեկը:

Գրիգոր Նարեկացին մահացել է 1003 թվականին և թաղվել Նարեկա վանքում: 1021 թվականին երբ Արծրունյաց Սենեքերիմ իշխանի հետ Վասպուրականի ժողովրդի մի մասը գաղթում է Փոքր Հայք, Սեբաստիա, իր հետ տանում է նաև այս մեծ սուրբի մի մասունքը և թաղում Ակնի մոտ: Այս վայրը ժողովրդի համար հետագայում վերածվում է սրբատեղիի:

ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՑԻ (ՇՆՈՐՀԱԼԻ)

Հայաստանյայց Եկեղեցու ամենապատվական և շնորհաշատ կաթողիկոսներից մեկն էր Ներսես Կլայեցին, որը ծանոթ է նաև «Շնորհալի» տիտղոսով:

Ներսես Շնորհալին ծնվել է 1102 թվականին Տլուք գավառի Ծովք դղյակում: Ներսեսի հայրը Պահլավունի իշխան Ապիրատն էր, մոր կողմից՝ Գրիգոր Մագիստրոսի թոռը: Հենց այդ պատճառով էլ Ներսեսի և իր եղբոր՝ Գրիգորի ուսման և դաստիարակության գործն իր վրա է վերցնում Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը: Ներսեսն ու Գրիգորը իրենց ուսումնառությունն աճց են կացնում Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքում, Ստեփանոս Մանուկ նշանավոր վարդապետի ձեռքի տակ:

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահից հետո, 1105 թվականին, նրա զարմիկների խնամքն ու հոգածությունը հանձնվում է Բարսեղ Անեցի կաթողիկոսին:

1113 թվականին Կաթողիկոսական Աթոռ է բարձրանում Ներսեսի եղբայրը՝ Գրիգորը (Գրիգոր Գ): Որոշ ժամանակ անց, քաղաքական հանգամանքների բերումով, երկու եղբայրները Կաթողիկոսական Աթոռը տեղափոխում են իրենց հայրենական Ծովք ամրոց, որտեղ և մինչև 1150 թվականը ապրել և ստեղծագործել է Շնորհալին: Այնուհետև Ծովքից Կաթողիկոսական Աթոռը տեղափոխվում է Հռոմկլա:

Ներսես Կլայեցին (Շնորհալի) գրել է բազմաթիվ տաղեր, մեղեդիներ, շարականներ, գանձեր, աղոթքներ, հանելուկներ, խրատներ, մեկնություններ, այլ գործեր՝ «Վիպասանութիւն», «Յիսուս Որդի» և «Ողբ Եդեսիոյ», երեք նշանավոր դավանաբանական գործեր Հայ և Հույն Եկեղեցիների միության մասին:

Ներսես Շնորհալին մահացել է 1173 թվականին Հռոմկլայում: